

ՀԱՎՈՐԱ Լ. ՔՅՈՍԵՑՅԱՆ

«Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ» ԵՐԿԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ

«Անանիա վարդապետի» անվամբ մեզ են հասել մի շարք երկեր, որոնք «Հայկական մատենագիտության» մեջ օրինակելի գոյապատկերության գետնոված են երկրաչափական ճառերի շարքում¹։ Եղևելով բանասիրական մի շարք դիտումներից, ինչպես նաև՝ նյութի ոճական որոշակի նկարագրից՝ գալիս ենք այն հետևության, որ խնդրո առարկա երկը առավել թե նրվա ստուգությանը վերագրելի է հայ մատենագրության բազմերախտ մշակներից մեծամուն Անանիա Ծիրակացուն։

Խոսքը «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» վերտառությամբ ճառի մասին է (սկ. «Յաղագս Յովնանու հակիրճ և համառօտ բանի անցցուք, բացալայտելով զծածկեալ խորհուրդն... և նորոգեալք հոգով գիտութեամբ, զի միաբանութեամբ ի մի բերան փառաւորեցեն...»), որ ձեռագրերում հանդիպում է նաև «Քարոզ երանելոյն Անանիա վարդապետի ի վերայ խորհրդոյ Յովնանու մարգարեի», «Քարոզ...ի խորհուրդ Յովնանու մարգարեի», «Քարոզ...ի վերայ խորհրդոյ Յովնանու մարգարեի», «Յաղագս Յովնանու մարգարեի հակիրճ» խորագրային նման և այլազան տարբերությունով², որոնցում առանց բացառության,

իրեն ճառի հեղինակ, անորոշաբար «Անանիա վարդապետի» անունն է հիշվում։

Երկը ժամանակին ուսումնասիրվել և որոշ վերապահությամբ հրատարակվել է Հ. Բարսեղ Սարգիսյանի կողմից իրեն հեղինակությունը Ե դարի մատենագիր Անանիա Մյունեցու (կամ՝ Թարգմանչի)։ Ուշադրություն դարձնելով ճառի լեզվա-ոճական առանձնահատկությունների վրա՝ հայագետն իրավացիորեն գրում է. «Յամենայն դէպս, սոյն ճառն իր լեզուի համատարական մաքրութեամբն ու կորովով հանդերձ, պետք էմ ըսել, թե ունի ինչ ինչ, որք Ե դարու մեր երիցագոյն թարգմանչաց ամենաընտիր հայկաբանութեան չեն պատշաճիր»³։

Գործի հեղինակային պատկանելության ճշտորոշման մեջ առհասարակ և նման պարագայում, մասնավորաբար, առաջնային կարևորություն ունի այն երկերի հայտնաբերումը, որոնցից օգտվում է ճառի հեղինակը։ Քննելի երկը չի կարող պատկանել Ե դարի մատենագիր Անանիա Թարգմանչին այն պարզ պատճառով, որ նրա մեջ վկայաբերված, Եպիփան Կիպրացուն կամ Դորոթեոսին վերագրվող, «Մահ մարգարեից» կամ «Անուանք մարգարեից և

¹ Տե՛ս Հ. Ս. Անաչան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 757—795։

² Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերը, № № 83 (էջ 299ա—306բ), 788 (էջ 254ա—257բ), 998 (էջ 194բ—196ա), 9281 (էջ 12բ—15ա), 8276 (էջ 70բ—72ա)։

³ Հ. Բարսեղ վ. Սարգիսյան, Անանիա Թարգմանչին և իր գրական գործոց նմոշներ, Վենետիկ, 1899, էջ 15։ Հ. Գ. Զարբհանյանը ճառս վերագրում է Անանիա Սանահնեցուն (ԺԱ. դ.)։ «Հայկական հին դպրութեան պատմություն (Դ—ԺԳ դար)» Վենետիկ, 1897, էջ 588—590։

վարք» սուրբգրային անվավերը (մուտք գործելով հայ միջավայր և դարից հետո) մեր մատենագրությանը հայտնի է է—Ը դարի թարգմանությամբ¹։ «Մահ մարգարեից» երկը պարունակող վեցնոսիկյան ձեռագրերից մեկի հիշատակարանում սույն գործի համար նշվում է, թե «Դարայ գրուեալ»։ Սա նշանակում է, որ գործի «յոյն կամ սեմական քնագիրը» գտել և հայերեն է թարգմանել Դավիթը² (այս և հետագա ընդգծումները մերն են—Լ. Բ.)։ Սակայն ո՞ր Դավթի մասին է խոսքը։ Է—Ը դդ. հայ թարգմանական գրականության մեջ հիշատակվում են երկու Դավիթներ. Դավիթ Տարոնեցի (Է դ.) և Դավիթ Հյուսիսային Կոստանդնուպոլսեցի (Ը դ.)։ Սրանցից երկրորդը, որ ազգությամբ, ըստ երևույթից, հույն էր³, չի կարող «Մահ մարգարեից» անվավերի թարգմանիչը համարվել։ Այսօրինակ հավաստման համար ամրակայուն հիմք կարող է ծառայել թարգմանության լեզուն։ «Մահ մարգարեից» անվավերը, ինչպես դիտել է տալիս նաև Լ. Բ. Սարգիսյանը, «բոլորովին ազատ է» Դավիթ Հյուսիսային Կոստանդնուպոլսեցու և Ստեփանոս Սյունեցու աշխատակցությամբ հայերեն թարգմանված երկերի ակնհայտ հունարանություններից⁴։ Հեշտապես, հայագետի հիմնավոր հավաստմամբ, այստեղ հիշատակված Դավիթը ոչ այլ ոք է, քան Է դարի առաջին կեսի նշանավոր մատենագիր Դավիթ Տարոնեցին (մահ. 661 թ.)⁵, որ թարգմանական գրա-

կանության մեջ հայտնի է իբրև թարգմանիչը Ս. Բարսեղ Կեսարացու ճառերի⁶, ճառեր, որոնք աչքի են ընկնում առավել հայեցի թարգմանությամբ, որպիսի հանգամանքը շեշտելի է թվում հունարան հայերենի ծաղկման այդ շրջափուլի համար։

Արդ մեկ անգամ ծանոթ լինելով Ս. Բարսեղ Կեսարացու երկերից «Վեցօրեայի» հայերեն ոսկեդարյան թարգմանությանը⁷, քացառված չէ, որ Ամանիա Ծիրակացին պետք է օգտվեր նաև Ս. Բարսեղի ճառերի (այս պարագային արդեն իր օրերին) թարգմանիչ Դավիթ Տարոնեցու աշխատությամբ թարգմանություններից։ Ահավասիկ այս թարգմանություններից մեկն էլ հենց «Մահ մարգարեից» սուրբգրային անվավերն էր, որից և օգտվել է Ամանիա Ծիրակացին։ Օգտվելու կերպն անգամ հատուկ է մեր մատենագրին, հանգամանք, որ անստարակոյս խոսում է հօգուտ մեր վերագրումի։ Ինչպես հայտնի է (ամշուշտ քացառելով քառացի հառաջաբերությունները) Ս. Բարսեղի «Վեցօրեայից» օգտվելիս Ծիրակացին համարգրում-համառոտում է համապատասխան հատվածները և հետո միայն դրանք ներմուծում իր երկերի մեջ։ Սկզբնաղբյուրից օգտվելու այս բուկրքունքը կիրառվում է ներկա դեպքում նա։ «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» ճառի «առեալ մարգարեին գմայր իր՝ գնաց ի մէջ հեթանոսաց, ասելով, թե ստեղծեցի մարգարեութեան իմոյ» տողերը ոչ այլ ինչ են, քայց եթե խմբագրում-համառոտումը հիշյալ անվավերի «այլ առեալ գմայր իր չոգալ պանդխտեցա ի Սուր, և ի գաւառին աղազեաց ընդ հեթանոսս. զի ասէր թէ այսպէս քարծից գնախատիմս իմ, զի ստեղծեցի ի մարգարեանալ իմում...»⁸ հատվածի։

Բացի սուրբգրային այս անվավերից, ինչպես արդեն իրավացիորեն նկատվել և ցույց է տրվել, Ամանիա վարդապետը զգալիորեն օգտվել է Փիլոն Նքրպեցու «Յադագ Յովնանու» երկից։ Ամանիայի և Փիլոնի ճառերի համապատասխան հատվածները «ամբողջութենէ անկի՝ քառերու, քացատրութեանց և գաղափարի նոյ-

¹ «Էն յիբալի,—այս կապակցությամբ գրում է Լ. Բ. Սարգիսյանը,—«Մահ մարգարեից» գրքիսմն եթէ Նախիվանո Կիպրացոյ կամ Դորոթեոսի հարազատ գործ չէ, դժուար է ընդունել, որ Ե դարում Ամանիա Թարգմանիին ծանոթ եղած լինէր։ Ուստի դարձեալ կը կրկնենք, թէ այս և լեզուական մի բանի առումներ ի նկատի առած, վերապահութեամբ միայն Ամանիա Թարգմանիի անուամբ կը հրատարակենք զայս, մինչև որ ուրիշ մեզի անձնօք քրչագրեր գան և նոր լոյս սփռեն այս մօրին կետիս վերայ»։ Լ. Բ. Սարգիսյան, Ամանիա Թարգմանիին..., էջ 15։

² Տե՛ս Լ. Բարսեղ վ. Սարգիսյան, Ուսումնասիրութիւնք Հին Կոստանդնուպոլսի անվաներ գրոց վրա, Վննետիկ, 1898, էջ 272։

³ Լ. Բարսեղ վ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վննետիկ, հտ. Բ, Վննետիկ, 1924, էջ 301։

⁴ Տե՛ս Լ. Բ. Սարգիսյան, Ուսումնասիրութիւնք Հին Կոստանդնուպոլսի..., էջ 272։

⁵ Լ. Բ. Սարգիսյան, Նշվ. աշխ., էջ 271—272, Լ. Անադոյն, Հայոց անձնանունների քառարան, հտ. Բ, Նքեան, 1944, էջ 27։

⁶ Տե՛ս Կ. Մորադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Նքեան, 1976, էջ 174—178։

⁷ Կ. Մորադյան, Նշվ. աշխ., էջ 210—215։

⁸ Լ. Բ. Սարգիսյան, Ամանիա Թարգմանիին..., էջ 3, նաև՝ տողատակ։

⁹ Տե՛ս «Թանգարան հին և նոր նախնեաց, Ա. Անկյանոն գիրք Հին Կոստանդնուպոլսի», Վննետիկ, 1896, էջ 211։

նությունն ցոյց կու տան»¹³: Իր այս հավաստիացումն ավելի վավերական դարձնելու համար Հ. Բ. Սարգիսյանը վկայակոչում գուգադրում է Փիլոնի և Ամանիայի համա-

նուն ճառերի աղերսվող հատվածները: Ի շարս հայագետի բերած գուգահեռ տեղիների՝ նկատառելի են ճակ երկու ճառերից հանդիպադրվող հետևյալ հատվածները.

«...քանզի ես իբրև ի ձեղումնացելոյ իմն որովայնէ՝ պղնձի իմն ձեղումամբ և երկաթի որմովք ըմբռնեալ ծածկիմ... և թեոցն շարժումն՝ իբրև կառք իմն թագաւորի»:

«Իբրև պղնձի պարսպօք (շուրջ փակեալ) կարծրագուն կողիք վիշապին, և ձեղում յարկին՝ քան գերկաթ կարծրագուն Արդ առեալ կիտոսին գծովման շրջեցուցանէր..., իբրև կառք եղեալ թագաւորի»:

«Փիլոնի Երրայեցու Մնացորդք ի Հայս...», Վննտիկ, 1826, էջ 590:

Հ. Բ. Սարգիսեան, Ամանիա թարգմանիչն..., էջ 6:

Հայտնի է, որ Փիլոնի երկերի հայերեն թարգմանությունը, կատարված լինելով 460—470 ական թվականներին և այսու մաս կազմելով հունարան թարգմանությունների առաջին խմբի, վերագրվում է Ամանիա թարգմանիչին: Ընդունելով հանդերձ այս քիչ հավանական վերագրումը՝ պետք է նկատել տակալն հետևյալը. Եթե արձանագրված գուգահեռ հատվածների մի մասը Փիլոնի երկի համապատասխան հատվածների հետ ունեն սուկ իմաստային անորոշ, անստույգ ընդհանրություններ (որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ իմաստային, «բացատրական» ազատ հառաջաբերությունը փիլոնյան հատվածների), ապա, դարձյալ Սարգիսյանի կողմից արձանագրված, մեր գուգադրման մեջ առկա ընդգծումները վկայում են այն մասին, որ Ամանիա վարդապետն օգտվել է Փիլոն Երրայեցու համանուն երկի մինչ այդ արդեն հայտնի հայերեն թարգմանությունից: Եվ իրապես. Դժվար թե թարգմանիչն ինքը օգտվեր իր իսկ թարգմանությունից: Նույն նյութին նշվիրված մի գործ գրելու համար, ամենապարզ տրամաբանությամբ, թարգմանիչ-հեղինակն ուղղակի կդիմեր երկի հունարեն բնագրին, ինչն իր հերթին պետք է օրինաչափորեն բացատրեր բառային կամ բառա-դարձվածային որևէ նույնությունը:

¹³ Հ. Բ. Սարգիսեան, Ամանիա Թարգմանիչն..., էջ ԻԲ:

* Ուստի ամհավանական է թվում Հ. Բարսեղ Սարգիսյանի պնդումն այն մասին, թե Ամանիան «յօրինելով իր այս ճառը՝ բնականապես Փիլոնի գաղափարներու հետ՝ անոր թարգմանութեան մէջ նախապէս գործածած իր բառերն... իսկ՝ իբրև ընդելական մի բան՝ վերստին յեղելած է աստ և անդ»։ Ամանիա Թարգմանիչն..., էջ ԻԳ: Վաստակաշատ բանասերի այս տեսակետը մերժելի է թվում թեկուզ հետևյալ օրինակով. Եթե Մակարայեցվոց

Միմնդեռ մեր հանդիպադրման մեջ առկա այնօրինակ նույնություններն, անտարակույս, ինչպես արդեն նկատվեց, ենթադրում են սկզբնաղբյուրի հայերեն թարգմանություն: Հունարան թարգմանություններից օգտվելու այս նախասիրությունը (որ թելադրված էր գիտական եզրաբանության մեջ հունարան դպրոցի ձեռք բերած խոշոր նվաճումներով (ինչպես հայտնի է լավագույնս դրսևորվեց Ամանիա Ժիրակացու բառապաշարում¹⁴: Այս պարագային ևս հավատարիմ մնալով իր այդ նախասիրությանը, հեղինակն օգտվում է գիտական կոառնոդությունը խթանող հունարան թարգմանություններից:

Ձեռագրական բնության տվյալները նմանապես իրենց ոչ անկարևոր նպաստն են բերում խնդրի պարզաբանմանը: Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 1007 (էջ 93բ—101բ), 3795 (էջ 71բ—76ա) ձեռագրերում գետնելված «Երիցս երանեալ վարդապետացն Յովհաննու Ոսկեբերանի և Եփրեմի և Ամանիայի ասացեալ ի Յունան մարգարէ» խորագիրը կրող նյութը խընդրո առարկա երկի խմբագիր տարբերակն

գրքի հայերեն թարգմանության և Կորյունի ու Եղիշեի հայտնի երկերի մեջ նկատվող ռճական, բառային, բառա-դարձվածային նույնություններն ու նմանություններն ենթադրել էին տալիս, թե Կորյունը կամ Եղիշեն է Մակարայեցվոց գրքի հայերեն թարգմանիչը, ապա առավել համակողմանի և հանգամանալից հետազոտությունները բերում են «նմանություններն ու համընկնումները բանաբաղությամբ ու ազդեցություններով բացատրելու» կարծիքին, ինչը «փաստերի տրամաբանությամբ առավել հիմնավոր է»։ Հ. Ամալյան, Մակարայեցվոց գրքի հայերեն թարգմանության ժամանակի և հեղինակի մասին, «Էջմիածին», 1980, № Բ—Գ, էջ 70—74:

¹⁴ Հմմտ. Լ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1828, էջ 92:

դեպքում, զանցառելով մնաց վարկածի ընդունելի կամ անընդունելի լինելը, բացորոշ է մատենագրի ու նրա երկի մեզանում վայելած ճանաչումն ու հեղինակությունը տակավին թ—ժ դարերի սահմանագծում, շնորհիվ որի, արդեն այդ պատմաշրջանում այն, իբրև տոնապատմության մշակակություն ունեցող կարևոր միավոր, մեկ անգամ ևս հյուրընկալվել էր հայ եկեղեցական մատենագրության այս արժեքավոր հուշարձանի մեջ:

Այսու միանգամայն աներկբա է, որ «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» ճառը չի կարող պատկանել այդ ժամանակաշրջանի առավել հայտնի Ամանիաներից ո՛չ Ամանիա Մոկացի Կաթողիկոսին (941—985), ո՛չ Ամանիա Նարեկացուն (Ժ դ.)¹⁹ և ո՛չ էլ Ամանիա Սանահնեցուն (ԺԱ դ.): Սակայն, ինչպես նկատվեց, այն չի կարող պատկանել նախորդ Ամանիաներից Ամանիա Թարգմանչին մույնպես: Կնշանակի. «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» ճառի հեղինակ հիշվող «Ամանիա վարդապետը» ապրել է Ամանիա Թարգմանչից հետո և Զաքարիա Զագեցուց առաջ: Այդ ժամա-

նակահատվածի մեզ հայտնի համանուն մատենագիրներից միակը և, ընդ որում, ամենամշանավորը Ամանիա Թիրակացին է, որին և վերագրում ենք այս գործը: Մեր վերագրման իրավասությունն է կարծես հավաստում մահ Մաշտոցյան Մատենադարանի № 2111 ձեռագրում (ընթորինակված է՝ 1654—75 թթ.) գտնվող մույն այս խմբագիր ճառի խորագիրը. «Երիցս երանելի սուրբ վարդապետացն Յովնանու Ոսկեբերանի և Եփրեմի և Ամանիայի Թիրակացույ ասացեալ...» (էջ 202ա): Թվում է, պատահական չէ Ամանիա Թիրակացու անվան հիշատակումը (թող որ ԺԱ—ԺԲ դարից անհամեմատ ուշ) ԺԷ դարում ընթորինակված երկի խորագրում: Այն, ըստ երևույթին, պետք է կապել ձեռագրային բազմադարյան ավանդույթի հետ, ավանդույթ, որ հարյուրամյակներ շարունակ կարող էր խորագրում Թիրակացույ անունը պահպանել (ինչպես որ մույն այս խորագրում տևաբար, անփոփոխ ձևով պահպանել ու սրբագործել էր Ոսկեբերանի և Եփրեմի անունները (և, միայն ժամանակի ընթացքում, որոշ ընթորինակությունների մեջ, շեղվելով ընկալյալ ավանդույթից Թիրակացույ-ն մոռացության է տրվել: Բացառված չէ, որ ԺԷ դարում ընթորինակված այս գործը գրչագրվել է առավել հին, նախազադարկարին փոքրիշատե մոտիկ կանգնած մի ձեռագրից:

Այսօրինակ փաստերի հաշվառումը մեզ բերում է այն եզրակացության, որ ցարդ անորոշաբար «Ամանիա վարդապետի» անունը կրող «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» ճառն իրապես է դարի մեծահամբավ մատենագիր Ամանիա Թիրակացու գրչին է վերագրելի:

* *

Երկի համակողմանի վերլուծման ու արժևորման մեջ նվազ շահեկան չէ մահ զուտ հայրախոսական աղբյուրների քննությունը:

Քրիստոսի զոհաբերման խորհուրդը մեկնող հատվածում, ակնարկելով Ղևոն. ԺԶ 9—10 համարը, Ամանիա վարդապետը գրում է. «Զմույն և Մովսես նկարագրեաց յերկուս մոխազան վիճակեալս, մին՝ Տեառն, և մին՝ Ազայելի, այսինքն՝ բարկութեան Աստուծոյ. որ և Տեառն եղանք վիճակ՝ ապանեալ լինէր, իսկ Ազայելին՝ ազատեալ կապեալ ի մա որդան կարմիր, և արձակէին յակոխ անապատ, և անդ կերակրէր զերանութիւն երկրին զամն ողջուն, անուանըս պահելով ի գազանաց և ի կառարել ամին դառնայր անդրէն ի բանակն՝ սպիտակա-

¹⁹ Խնդրող առարկա երկը պարունակող Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 468 ձեռագրի (Մաղղմսիոր, 1289 թ.) ստորին լուսանցքներում «Ի Յովնան վերլուծութիւն», «Յովնանու Ամաթեայ», «Յովնանու» նշումների հետ հանդիպում է մահ մույն գրչի «Ի Յովնան՝ Ամանիա վարդապետի Նարեկացու» նշումը, որի մասին հրատարակիչը հետևյալ ծանուցումն է տալիս. «Այս երկույս ցոյց կու տայ մեզ, թէ հնագույն քնագրի մեջ քառս՝ «Նարեկացու» չկար, ինչպես խորագրէն կը տեսնուի և թէ ԺԳ դարում անգամ այդ ճառի մասին տարակուս կար: Հետևաբար, մեր գրիչն այլ՝ ըստ կամս իրեն ծանօթ Ամանիա Նարեկացու ծանօթագրած է զայն, բայց ճառիս լեզուն շատ կը տարբերի Ամանիա Նարեկացու լեզուէն». Հ. Բ. Սարգիսեան, Ամանիա Թարգմանչի..., էջ 1, տողատակ: Այս տեսակետից մույնքան հատկանշական է այն իրողությունը, որ Մաշտոցյան Մատենադարանի № № 8281 և 998 ձեռագրերում Ամանիա վարդապետի «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» երկին (էջ 12բ—15ա, էջ 194բ—198ա՝ մի քանի միավորից) հետևում է, այժմ արդեն ստուգապես Ամանիա Նարեկացուն պատկանող «Արդ եթէ կամիցիս յաղթես աշխարհի...» սկզբածքով խրատը (էջ 24բ—25ա, վերջից թերի, էջ 395ա—398ա. Այս մասին տե՛ս Հրաչյա Թամրազյան, Ամանիա Նարեկացու խրատաշարքը, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր» Հաս. գիտ., 1979, № 11, էջ 78—92). Հանգամանք, որ զատորոշելով այս երկու հեղինակներին, իր նպատակն է բերում ճառիս հեղինակային պատկանելության ճշգրտման հարցում:

ցեալ և լուսակիզն ստեալ մաքրեալ, և կարծրութիւն որդան ի նոյն տախտակութիւն փոխարկեալ»²⁰։ Ազայելի հետ կապով այս հատվածը, որ, ը. Բ. Սարգիսյանի գնահատմամբ, Աստվածաշնչի որոշման վեցիցյան կամ մեզ անհայտ մեկ այլ աղբյուրի մի քննորն է²¹, մեր կարծիքով Եփրեմ Ասորու Ղատացվոց մեկնության մի դրվագի նշմարելի ազդեցությունն է կրում։ «Ի խորհուրդ Յովնանու» հատվածն իր ամբողջության մեջ Եփրեմի մեկնության համապատասխան հատվածի կառուցվածքի հետևողությամբ է ստեղծվել²²։ Բաղդատելի երկու քննորներում էլ դետական հատվածի մեկնությանը հետևում է Եսայու մարգարեությունից քերվող վկայությունը (Ես. Ա 18—19) այն տարբերությամբ, որ վերջինս Եփրեմի մեկնության մեջ վկայական է ամբողջությամբ, մինչդեռ Անանիա վարդապետի ճառում բացակայում է վերջին մախադասությունը։ Սակայն զուգահեռ հատվածների մեջ առավել հատկանշականը մախ այն է, որ Անանիան նույնությամբ քերում է Աստվածաշնչի Յոթանասնից թարգմանությանը անմանոթ և սակայն հայ մատենագրությանը միայն Ս Եփրեմի տվյալ մեկնությամբ հայտնի Ազայել (Ազազայել) անունը։ Ազայելի, իբրև «բարկութեան Աստուծոյ» Անանիայի ըստուգաբանությունը ուղղակիորեն ծագում է բացատրապես Ս. Եփրեմի Ղատացվոց մեկնության մեջ հանդիպող հետևյալ բացատրությունից. «Սոյնպէս և Ազազայել, զի յիշեցնէմ զաստկութիւն նորա և զքարկութիւն նորա, որ եղև ի վերայ նոցա յանապատի... զի Ազազայելը՝ Մաստկութիւն Աստուծոյ անուանի»²³, որն էլ իր հերթին, հավանաբար, վերցված է հինկտակարանային անվավերներից Ենովքի անվամբ հայտնի

պարականոնից, որ «Աստուծոյ դեմ ապրտամբամ։ անդրբոհեղեղյան Բականիի պարագլուխ» Ազազայելը²⁴, Եփրեմյան մեկնության մեջ ըստ պատշաճի ներկայացվել է իբրև «աստկութիւն Աստուծոյ», մի բացատրություն, որ միանգամայն համահաստ է Անանիա Օրոսկացու վերն ընդգծված Ազայելի, իբրև «բարկութեան Աստուծոյ», մեկնություն-ստուգաբանությանը։

Երրորդ, Աստվածաշնչի քաջ հայտնի «Յոթանասնից» և «Պեշիտտա» անունը կրող թարգմանություններում առկա «զբարկութիւնս երկրի կերիօհ» (Ես. Ա 19)²⁵ ընթերցվածի դիմաց Ս. Եփրեմն ունի «զբարկութիւն երկրի կերիցէք» բառակապակցությունը։ Եփրեմյան այս ընթերցվածի որոշակի ազդեցությունն է կրում Անանիա վարդապետի դետական հատվածի մեկնության մեջ առկա «կերակրէր զերանութիւն երկրին» ընթերցվածը։ Եվ վերջապես՝ չորրորդ, Ազայելին (Ազազայելին) նվիրաբերվող նոխագի անապատում մեկ տարի մնալու մանրամասն բացակայում է Աստվածաշնչում առհասարակ և առկա է միայն Ս. Եփրեմի այս մեկնության մեջ, որի ազդեցությամբ և Անանիան նշում է, թե «կերակրէր զերանութիւն երկրին զամն ողջ»։

Հովնան մարգարեին նվիրված այս գործում լավագույնս դրսևորվում է ճառագիր հեղինակի ոչ միայն աստվածաբանական հմտությունները, այլև մեկնողական դատողություններն ինքնուրույնաբար մտականուցելու հազվադեպ շնորհները։ Այս հանգամանքը շեշտելի է թվում հատկապես այն պատճառով, որ իր ժամանակի մատենագիրների մեջնա բազմաթիւ լինելով Ս. Ոսկերեքանի ու Ս. Եփրեմի գործերին և, ամենայն հավանականությամբ, ծանոթ լինե-

²⁰ Ը. Բ. Սարգիսյան, Անանիա Թարգմանիչն..., էջ 9։ Աստվածաշնչի կանոնական տեքստում բացակայող «Ազայել անունը հայ մատենագրության մեջ մինչև այժմ հիշատակված էր համարվում լույս չորս անգամ, այն էլ Եփրեմ Ասորու Ղատացվոց մեկնության մեջ (Ը. Անտոյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, հտ. Բ, Վենետիկ, 1926, էջ 286—287, նույնի՝ Հայերեն արժատական բառարան, հտ. Ա, Երևան, 1971, էջ 81, նաև՝ Ը. Հովհաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 149)։ Մինչդեռ այս իրողությամբ պարզվում է, որ այն միայն թարգմանական այս գործում չէ, որ կենցաղավարել է։

²¹ Ը. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 19։

²² Տե՛ս «Արքայն Եփրեմի Մատենագրութիւնը», հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 222—223։

²³ Անդ։

²⁴ Ը. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 149։ «Ազազայել» անունը (אֶזְרָאֵל—אֶזְרָאֵל) առկա է ոչ միայն Հին Կտակարանի եբրայերեն բնագրում (The Hebrew-English Old Testament from the Bagster Polyglot Bible, London, 1971, p. 80, նաև Exodus et Leviticus, ed. K. Elliger et. W. Rudolph, Stuttgart, 1973, S. 101) ու ենովքի անվամբ անվավերում, այլև Իրիհեսի (PG. t. VII, col. 628A) և Ռոզհիհեսի (PG. t. XI, col. 1364C) երկերում, Տես E. A. Sophocles, Greek Lexicon of the Roman and Byzantine Periods, (from B. C. 146 to A. D. 1100), vol. 1, N—Y, ամբվ. p. 85.

²⁵ Տե՛ս The Hebrew-English Old Testament... The Septuagint Version of the Old Testament With an English translation and with various readings and critical notes, London, 1970, 'Ktāb qadišā diatēqē 'asiqtā (Vetus Testamentum Syriace), Urmtae, 1852.

լով հայրախոսական գրականության այդ հսկաների՝ Հովհանն մարգարեին նվիրված ճառերին և՛ Անանիա վարդապետն, այդուհանդերձ, խնդրո առարկա երկում հանդես է բերում գնահատելի ինքնուրույնություն: Մի կողմից Անանիա վարդապետի և մյուս կողմից Ոսկեքերանի ու Եփրեմի մամաքանության ճառերը միմյանցից զգալի-

որեն տարբերվում են մեկնողական նյութի թելադրած ընդհանուր տեղիներում անգամ, ուր, թվում է, միևնույն երևույթի նկարագրությունն ու մեկնությունը կարող էր մամաքանի եզրեր ստեղծել: Բերենք թեկուզ սույն իրողությունը փաստող երկու հատված Ոսկեքերանի համապատասխան երկից.

«Առեալ զնա ծովում՝ իբրև կապարանի իմիք որովայնի ձկանն մատնեաց առ Տէրն պահել զփախուցեալն».

«Յովհաննու Ոսկեքերանի ճառք», էջ 89

«Իջեալ Յովհանն ի պորտ ձկանն, իբրև պղնձի պարսպօք կարծրագոյն կողիւք վիշապին... պահէր ամբողջեամբ զաւանդեալն մնա զանձ».

Հ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանիչն..., էջ 8:

«Իբրև լատենի զամենայն քննէին» զինչ քո գործ, ուստի՞ գաս, յո՞ երթաս, յորմէ գաւառէ, յորմէ ժողովրդենէ եւ դու: ...այլ իբրև ի դատաստանի ոսոխացն մերձեցելոց վկայիցն շուրջ կացելոց և լանդիման եղելոց՝ ոչ յառաջագոյն դատաւորք զվճիռն ի վերայ բերեն, մինչև ինքն իսկ դատաւարտեալն ոսոխ իրում մեղանացն լինիցի, նույնպէս և անդ նաւարք արք բարբարոսք և անմիտք, որք յատեանս բարեկարգութիւնքն էին՝ նմանեցուցանէին»:

անդ, էջ 87:

«Գան և առ մարգարէն, քննել՝ թէ ուստի», և կամ յո՞ երթայ: Եւ իմացեալ զապստամբութիւն մարգարէին, կարգեցին ատեան: Նաւն էր իբրև զքեմ դատաւորաց... իսկ նաւավարքն, ոչ իբրև զանմարդիս՝ յամբոյրս հատանէին զվճիռ մահուն, այլ իբրև մարդասէրս՝ քաջով քննութեամբ և վիճակաւ յայտնէին զյանցանս մարգարէին, մինչև ինքնին պարտեալ՝ խոտովան լինէր զմեղս իր»:

անդ, էջ 5:

Սակայն այլ է նշված հեղինակներից Անանիայի (ոչ թե մեխանիկորեն, այլ) ըստեղծագործաբար օգտվելու պարագան: Եթե թերևս, ինչպես համեմատությունն է ցույց տալիս, տարակույսով կարելի է խոսել Ս. Եփրեմի համաքննության գործից Անանիա Թիրակացու օգտվելու մասին²⁶, ապա նույնը չի կարելի ասել Ոսկեքերանի պարագային: Անկասկած է, որ մատենագիրս (դատելով վերոբերյալ քաղդաոսման մեջ արձանագրելի տարբերությունների և, միաժամանակ, թող որ ամենշան նմանությունների բնույթից²⁷) այսուհանդերձ աչքի առաջ է ունեցել Ոսկեքերանի նշված գործը: Սա նշանակում է, որ պատկերի կառուցման մտահղացման մեջ թերևս ինչոր չափով հարազատ մնալով Ոսկեքերանին, այսուամենայնիվ Թիրակացին կարողանում է ինքնուրույնությամբ լուծել մեկ-

նողական հնարների հետ սերտորեն ադերսվող գեղարվեստական մի շարք խընդիրներ: Աստվածաբանական, մեկնողական, ինչպես նաև՝ գեղարվեստական այն ինքնատիպությունը, որով հատկանշվում է Անանիա Թիրակացու այս գործը, թույլ է տալիս երկը հայ մեկնողական ճառագրության արժեքավոր արտադրանքներից մեկը համարել: Հիրավի. սույն հանգամանքն է հավաստում ոչ միայն մինչև Ժ—ԺԱ դարը ճառի՝ Ոսկեքերանի և Եփրեմի երկերի հետ խմբագրված լինելը, այլև նրա հնուց անտի գետնելված լինելու իրողությունը «վանական դպրոցներում ուսուցողական նպատակներով օգտագործվող»²⁸ մի այնպիսի կարևորագույն երկում, որպիսին է Տոնապատճառը: Ինչպես երևում է, տակավին մատենագրի կենդանության օրոք այս ճառը մեծ կշիռ ու հեղինակություն է ունեցել հայ մատենագրության մեջ առհասարակ և տեսական, վարդապետական գրականության մեջ՝ մասնավորաբար: Սրանով է պայմանավորված և այն ազդեցությունը, որ նա թողել է հետագա հայ

²⁶ Հ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանիչն..., էջ 115:

²⁷ Սակայն բացառված չէ, որ խնդրական նմանությունները հետևանքը լինեն երկու հեղինակների մեկ ընդհանուր սկզբնաղբյուրներից, այն է՝ Փիլոնի վերոհիշյալ երկից, օգտվելու:

²⁸ Փ. Անթարյան, նշվ. աշխ., էջ 118:

մեկնողական գրականության վրա: Այդ են վկայում Հովհաննես Եղմկացի-Մործորեցու (Ներսես Շնորհալու Մատթեոսի մեկնության շարադրությունը հանդիսացող)

Մատթեոսի մեկնությունից և «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» մատից հանդիպադրվող հետևյալ երեք առավել ներկայաճաշի հատվածները.

«Իսկ Յովնան հրաժարեր, զի ոչ կամեր տալ պիղծ հեթանոսաց զտուրք մարգարեութիւն որդոցն Աբրահամու, որպէս և Տէր մեր ոչ կամեր զհաց մանկանց արկանել շանց: Եւ այլ ազգ ևս. զի հայեցաւ նա յարուեստ մարգարեութեանն իւրոյ և իմացաւ, թէ ոչ կատարի քանք նորա վասն դարձի նոցա և ստեալ խոտի մարգարեութիւն նորա ի մէջ Իսրայելի, զի զայն ևս նշան Մովսէս վասն սուտ մարգարեիցն, թէ յորժամ մարգարեութիւնն զկատարումն ոչ առցէ ...»

Հ. Բ. Սարգիսեան, Անանիա քարզմանիչն..., էջ 3:

«Իսկ Յովնան հրաժարեր, նախ զի ոչ կամեր պղծել զտուրք մարգարեութիւն հեթանոսաց տալ, ըստ այնմ ոչ է բարոյ առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Եւ երկրորդ, զի հայեցաւ յարուեստ իւր ի մարգարեութիւն ասեմ, զի ստէին քանք նորա, զոր ասացեալ Մովսէս սպանանել զայնպիսին վասնորոյ փախստական լինէր...»:

«Մեկնութիւն սուրբ Աստուարանին որ ըստ Մատթեոսի, առարեալ ի սրբոյն Ներսիս Շնորհալոյ ... և աւարտեալ երանելոյն Յովնանու Մովսէսացոյ, որ և կոչի Մործորեցի», Կ. Գոլիս, 1825, էջ 284-85:

«Արդ, զայս է իմանալ պատճառ քարոզութեան յորժամ յանդիմանէին մարգարեքն զորդիսն Իսրայելի, և ոչ կարէին դարձուցանել ի հնազանդութիւն արքինացն, սկսանէին դարձեալ վասն գերութեանն նոցա մարգարեանալ, զի թերեւ ի քոնութեան տառապանացն, սովոյ և սրոյ և գերութեան կակղասցին ի խտութիւն սրտից նոցա և դարձին ի շարեացն: Եւ նոցա տեղեկացեալ, թէ վասն մեղաց... մատնին ի ձեռն ալլազեացն, առ որս հակառակութեամբ ընդդէմ մարգարեիցն ասէին, եթէ վասն մեղաց գերիմք, որք գերեն գմեղ և շարագոյնք են... Այս այս դարձեալ ասէին մարգարեքն, թէ գմեղ ընտրեաց Աստուած յամենայն ազգաց՝ բազում նշանօք...».

անդ, էջ 1-2:

«Վասն այս պատճառի, զի յորժամ յանդիմանէին զԻսրայել մարգարեքն՝ հնազանդել օրինացն Աստուծոյ, սպառնալով սով և գերութիւն, զի թերեւ կակղասցին, ժողովրդին հարցանէին, թէ վասն էր գերիմք և ի մարգարեիցն ուսեալք՝ թէ վասն մեղաց և կոտարաշտութեան և ժողովրդին ասէին՝ թէ որք գերենն շարագործք են քան գմեղ, իսկ նոքա պատասխանեալ ասէին թէ՝ գմեղ ընտրեաց Աստուած յամենայն ազգաց բազումք նշանօք...».

անդ, էջ 284

«Եւ արդ... խորհուրդ մեծ նկարէր* ի նմա-Աստուած՝ լինել օրինակ տերունական տնօրինութեանն... Այսպէս և Յովնանու մարգարեի դիմակաց եղեալ հրամանի Աբրաքին, հրաժարեաց ի պատուիրանէն և կարծէր փախչել յանրատանդակելի իշխանոցենէն...».

անդ, էջ 3-4:

«Արդ այս խորհուրդ նկարագրութեան մեծ եղև Ադամայ և Քրիստոսի ...վասն զի մարդքն առաջին՝ ախտի սատուածանալոյն ոչ իմացաւ ապաստանութիւն իւր որպէս և ոչ Յովնան զփախուստ իւր՝ թէ ոչ կարիցէ արտաքոյ լինել իշխանութեան Աստուծոյ և, որպէս Ադամ, ոչ հաստաց պատուիրանին...».

անդ, էջ 285

Ելնելով վերորերյալ իրողություններից՝ պետք է մտածել, որ քննված երկր, դեռ վաղ միջնադարից մաս կազմելով Տոնապատմատ ժողովածուի, մեծ նախադրում ու հեղինակություն է վայելել միջնադարյան Հայաստանի քարձրագույն դպրոցներում և վանական, ուսումնագիտական կենտրոններում, իբրև տեսական քննության կարևոր

երկասիրություն: Այսօր այն օգնում է հետազոտողին գիտամշակութային նոր լույսի տակ գնահատել Անանիա Շիրակացուն և նրա «Ի խորհուրդ Յովնանու մարգարեի» երկը, որպես մեկը հայ մեկնողական ճանաչողության և մտայնության ուշագրավ վաղագույն նմուշներից:

* Տարբերակ՝ նկարագրէր: